

րութիւններու մէջ է, կը մտածէ անձնասպան ըլլալ եւ ազատիլ այս անտանելի կեանքէն:

Կանտ, իր այս առաջին օրինակին մէջ, եսասիրութեան (Egoism) սկզբունքով, նկատի կ'առնէ հետեւեալ անձնական կանոնը (մաքսիմը).- *«եթէ կեանքս ծանր ու անտանելի ըլլայ, եսասիրութեան սկզբունքով ես կը դիմեմ անձնասպանութեան»:* Այստեղ պէտք է հարց տալ, որ եսասիրութեան սկզբունքը կրնա՞յ բնութեան օրէնք եւ անով՝ բարոյական օրէնք դառնալ, երբ մէկ կողմէ եսասիրութեամբ՝ կեանքը երկարելու, իսկ միւս կողմէն՝ կեանքը կրճատելու մասին կարելի է մտածել: Անշուշտ հակասութիւն մըն է, երբ նոյն օրէնքը կ'օգտագործուի երկու հակադիր տեսակետներու առնչութեամբ:

Այլ տեսանկիւնէ դիտուած, անձնասպան եղողը ինքզինք կ'օգտագործէ, լոկ որպէս *միջոց*, որպէսզի ազատի իր ծանր ու անտանելի վիճակէն: Երրորդ բանաձեւին մէջ սակայն, տեսանք, որ մարդը պարզ նիւթական *միջոց* մը չէ, այլ ինքնին *նպատակ* մը, ուրեմն կարելի չէ անձնասպանութեան դիմել:

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ անձնասպանութիւնը, մենք մեր հանդէպ ունեցած արարք մըն է, որու պարագային առանց հակասութեան ընդհանրականացում մը կարելի չէ պատկերացնել եւ միաժամա-նակ աս օրինական չէ (բնութեան օրէնքը նկատի ունենալով):

2. Խոստումի օրինակը

Այլ անձ մը, որ նիւթական դժուարութեան մէջ է, ստիպուած է պարտքի դրամ վերցնել, խոստանալով որոշ ժամանակ ետք վերադարձնել գումարը, քաջ գիտնալով հանդերձ, որ ինք այդ գումարը երբեք պիտի չկարենայ վերադարձնել:

Կանտ, իր երկրորդ օրինակին մէջ, եսասիրութեան (Egoism) սկզբունքով, նկատի կ'առնէ հետեւեալ անձնական կանոնը (մաքսիմ).- *«եթէ ես նիւթական դժուարութեան մէջ ըլլամ, պարտքի դրամ կը վերցնեմ ու կը խոստանամ որ գումարը պիտի վերադարձնեմ, գիտնալով հանդերձ, որ այդ գումարը երբեք պիտի չկարենամ վերադարձնել»:* Այստեղ դարձեալ պէտք է հարց տալ, որ այս անձնական կանոնը (մաքսիմը) կրնա՞յ ընդհանուր բնութեան օրէնք դառնալ եւ առանց որեւէ հակասութեան ընդհանրականացուիլ: Այլ խօսքով, կարելի՞ է երբեւիցէ եւ որեւէ տեղ, մարդկային ընկերութիւն մը պատկերացնել, ուր խոստումներու դրժումը կամ ստախօսութիւնը ընդհանուր օրէնք նկատուի:

Նաեւ այստեղ, այլ տեսանկիւնէ դիտուած, խոստմնադրուժ ստախօսը այլ անձ մը կ'օգտագործէ, լոկ որպէս *միջոց*, որպէսզի ազատի իր նիւթական ծանր վիճակէն: Երրորդ բանաձեւին մէջ սակայն, տեսանք, որ մարդը պարզ նիւթական *միջոց* մը չէ, այլ ինքնին *նպատակ* մը, ուրեմն բարոյապէս կարելի չէ ուրիշները շահագործել, պարզապէս անձնական վիճակը բարելաւելու համար: